

ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ^{22*}

Միեր Հարությունյան

Բանալի բառեր՝ Արցախյան շարժում, Հայաստան, նորագույն պատմության, ուսումնասիրության առարկա, հիմնական հրատարակությունները, քարոզական արտահայտություններ

Արցախյան շարժումը դարձակազմիկ ու շրջադարձային մեծ իրադարձություն էր համայն հայության համար, եթևարար այն պետք է լինի Հայաստանի նորագույն պատմության առաջնահերթ ուսումնասիրության առարկան: Արցախյան շարժումը վճռական բեկում էր հայ-թուրքական բազմադարյան պայքարի մեջ, որը մեր ժողովրդին վերադարձրեց հաղթողի հոգերանությունը և սեփական ուժերի նկատմամբ հավատն ու ինքնավստահությունը: Փաստորեն, քաղաքական փուլում ամբողջ հայությունը համախմբվեց մեկ զաղափարի շուրջ, ստեղծվեցին նախարյալներ ազգային նոր զարդարի և անկախ պետականության վերականգնման համար:

Անցած երեք տասնամյակի ընթացքում Հայաստանում (այդ թվում Արցախում), ինչպես նաև արտասահմանում լույս են տեսել մեծաթիվ հրատարակություններ, որոնք, ըստ ժամանակագրական, աշխարհագրական ու զաղափարախոսական առանձնահատկությունների, որոշակի զարգացումներ են ապրել, աստիճանաբար սուժել և տարածել փաստերի ու փաստարկների համակարգեր, դրանց կամայական մեկնաբանություններից ծնված առասպելներ ու քարոզական արտահայտություններ:

Սույն հոդվածով խնդիր ենք դրել մեր առջև համառոտ անդրադառնալու Արցախյան շարժման պատմագրության մի քանի հիմնահարցերի, որոնք առաջացել են հայ ուսումնասիրողների շրջանառած տեսակետների հետևանքով: Տվյալ խնդիր շրջանակներից դրւու ենք համարում օտարակենալու մանավանդ՝ հակարակորդ կողմի գրականության մեջ հաճախակի հանդիպող խևաթյուրումների ու սխալների քննադատությունը, մանավանդ՝ մանավանդ, որ դրա նախադեպն արդեն ունենք [1]:

Արցախյան շարժման պատմական զարգացման և հետագա փուլերի մասին օբյեկտիվ ճշմարտությունը ներկայացնելու խնդիր են լուծել փաստաթրեթի և նյութերի տարաբնույթ ժողովածուները: Հայաստանի Հանրապետության պատմության արխիվն առաջին անգամ ամբողջական տեսքով հրապարակել է նախկին Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում թուրքական զորքերի և ադրբեյջանական դրաժողով իշխանությունների կողմից բնիկ հայ ազգաբնակչության նկատմամբ 1918-1920 թվականներին իրագործված զանգվածային կոտորածների, բռնի տևականության, շարժական ու անշարժ գույքի կողոպուտի ու բռնագրավման և, որ ամենասուսալին է, ասիմիլյացիայի (ուժացման) քաղաքականությունը բացահայտող արժեքավոր փաստաթրեթը ու նյութեր [2]: Ժողովածուն կազմել են պատմական գիտությունների թեկնածու Սույն Միրգոյանը և բանասիրական գիտությունների թեկնածու Ավարդ Ղազիյանը: Պատասխանատու խմբագիրն է պատմագիտության դոկտոր Ամասունի Վիրաբյանը:

²²Հոդվածն ընդունվեց 18.03.2018:

Հոդվածը տպագրության է Երաշխավորել ՄՄՀ պատմության ամբիոնը

* Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳԱՍ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 16.10-007 գիտական թեմայի շրջանակներում:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՒ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Երկողորդ գիրքն ամփոփում է Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում հայ ազգաբնակչության կոտորածների մասին վկայող այլ փաստաթղթեր [3]:

Արցախյան շարժման բացահայտ-սահմանադրական փուլում, կապված աղբեցանական և կենտրոնական ԶՏՄ-ների կողմից միակողմանի ու իրականությունը նենագիտող քարոզությունը մերկացնելու, օրենսդիր ու գործադիր մարմինների որոշումների օրենսդիրության ապահովման նպատակով հիմնախնդրի վերաբերյալ պատմական, իրավական, քաղաքական և այլ տեսանկյունները փաստարկելու անհրաժեշտության հետ, Հայկական ԽՍՀ-ում և Արցախում օպերատիվորեն հրատարակվել են փաստաթղթերի և վավերագրերի ժողովածուներ [4]:

Հետագա տարիներին ևս հրապարակվել են նմանօինակ ժողովածուներ, որոնցում ներկայացվել են Արցախի հայ ազգաբնակչության ինքնորոշման հրավունքի պատմաքաղաքական, իրավական և այլ հիմքերը փաստող հարյուրավոր վավերագրեր [5]:

Նշված հրատարակություններից հատկանշելի է ճանաչված իրավաբան-միջազգայնագետ, Աղբեցան-ԼՂՀ իականարտության իրավաբաղաքական տեսակետների գիտական մշակման ասպարեզում մեծ ներդրում ունեցած Յուրի Գևորգի Բարյանովի (1925-2008) հիմնակազմ աշխատությունը [6]: Այդ աշխատության գիտական ու քաղաքական նշանակության մասին ժամանակին գրել ենք [7]:

Դեռևս Արցախյան շարժման քաղաքական փուլում լույս տեսած նրա «Ինքնորոշման հրավունքը ազգամիջան պրոբեմների դեմոկրատական լուծման հիմքն է» գիրը տեսականորեն հիմնավորում էր արցախահայության ինքնորոշման հրավունքը, անհերքելի փաստարկներով ու համոզիչ դատողություններով ցույց տվել, որ Արցախյան հիմնահարցի արդարացի լուժնամբ կարծիք է հասմել սահմանադրական և ժողովրդավարական ճանապարհով՝ ազգերի ազատ ինքնորոշման հրավունքի համաձայն [8]:

ԽՍՀՄ Գևորգ Երկրորդ նախարարականում Լեռնային Ղարաբաղի հարցով հանձնաժողովի կատարած աշխատանքների քննարկման նախօրենին կազմված փաստաթղթերի ժողովածուն [9] նպատակամիտված էր օրենսդիր լրատվություն տալ ԼՂԻՄ-ի հրադրության մասին, ծնավորել ճիշտ կարծիք ղարաբաղյան շարժման ակունքների, էռոյան ու նպատակների մասին:

Այն ունեցավ նաև երրորդ հրատարակությունը [10]:

Հահեն Մկրտչյանի հեկնակած նյութերի ու փաստաթղթերի ժողովածուն [11] բացահայտում է Արցախյան պատերազմի տարբեր կողմերը: Նրանում գետևած տարաբնույթ նյութերը, առաջին անգամ հրապակվող վավերագրերը սերտորեն առնչվում են Արցախի ազգային ազատագրական պայքարի հետ: Այն հետաքրքիր ու հարուստ նյութ է պարունակում ինչպես Արցախի, այնպես էլ, լայն առումով, Արցախյան շարժման, ԼՂՀ անկախության և հայոց երկրորդ պետականության կայացման պատմության համար:

Երևանի պետական համալսարանի հրատարակած ժողովածուն [12] ներառնում է մամուլից քաղված նյութերը Լեռնային Ղարաբաղի հետ կապված պատմաքաղաքական և իրավագիտական հարցերի, տնտեսական գարգացման, ժողովրդագրական հիմնախնդիրներին, նրա էթնուցակութային բնութագրության, Ռուսաստանի և Ղարաբաղի փոխհարաբերությունների պատմության վերաբերյալ: Ժողովածուի երկրորդ բաժնը կազմված է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը լուսաբանող փաստաթղթերից:

Պատմաքաններ Կ. Խաչատրյանի և Հ. Արքահայմանի կազմած փաստաթղթերի և նյութերի ժողովածուն [13] հիմնավորում է այն փաստը, որ խորհրդային ժամանակաշրջանում համայն հայությունը՝ թե՛ Խորհրդային Հայաստանում և ԼՂԻՄ-ում, և թե՛

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Սկսուածում, պայքարել է Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորելու համար: Նոյն հիմնակների կազմած երկրորդ ժողովածուն պարունակում է 1988-1989 թթ. հայ ժողովրդի լավագույն ներկայացուցչների՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախմբի ղեկավարության վերաբերյալ Խորհրդային Միության և Խորհրդային Հայաստանի ղեկավարներին, կուսակցական ու պետական մարմիններին ուղղված կոչերը, դիմումները, նաև ակտագրությունները, պահանջագրերը և այլն [14]:

Արցախյան շարժման մասին բավական հետաքրքիր և ուշագրավ տևեկություններ են պարունակում ղեպերի մասնակիցների ու ականատեսների հուշագրություններն ու օրագրությունները:

1991 թ. ամռանը տիխրահոչակ «Կոլցո» ռազմագործողության ընթացքում Հայրության շրջանի սահմանամերձ գյուղերի հայաբակիման անմիջական ու թարմ տպավորությունների ազդեցությամբ, հետագայում ԼՂՀ Գլխանության նախագահ ընտրված Արթուր Մկրտչյանը փորձել է վերահսկել ողբերգության պատճառները, իրադարձությունների ճիշտ պատկերը և ապագա քաղաքականության ուղիները [15]:

Սյու Յորք քաղաքում ծնված, Հայկական առողջապահության ընկերակցության բարեգործական կամավոր կազմակերպության հիմնադիր ու նախագահ, բժշկագիտության դոկտոր Քերոլան Նաջարյանի Հայաստան և Արցախ կատարած իր երկու տասնյակից ավելի ուղևորությունների օրագրությունները, որոնք առանձին գրքով թարգմանաբար տպագրել է ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատարկությունը [16], արձանագրությունն են 1988 թվականից ի վեր հայ ժողովրդի ապրած դժվարին օրերի և նկարագրություններ այն արիության, արժանապատվության, որ հանդես բերեցին հայերը ծայրահե պայմաններում: Հայնակը իրադարձություններն արձանագրել է բուռն սիրով, ամենայն մանրամասնություններով: Նրա կողմից ստեղծված հարուստ դրվագներն ու դիպվածները բացահայտում են հայ ոգու վեհությունը, դժվարությունները դիմակայելու կարողությունը և այլ որակներ, որոնք այս կամ այն չափով օգնեցին ստուգական պատերազմական արհավիրքներին և, ի վերջո, հաղթել:

Արցախյան շարժմանը նվիրված շարքի այս գիրքը՝ Բակուու Կարապետյանի հիմնակությամբ [17], ընդգրկում է 1988թ. փետրվարյան հայտնի ղեպերից մինչև մայիսի կեսերը: Այն մեծաքանակ նյութ է պարունակում ողջ ԽՍՀՄ-ում ու Արևելյան Եվրոպայում մեծ վերակիությունների սկիզբը դարձած Շարժման պատմություն ուսումնասիրողների համար:

Հայնակի մյուս գիրքը [18] պատմում է Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի փոխխոսնակ, բարոնուի Քերոլան Քոլսի Արցախ կատարած բարեգործական ուղևորությունների, արցախյան հիմնահարցի վերաբերյալ միջազգային հանրությանը տևեկություններ տալու նրա գործունեության մասին:

Բ. Կարապետյանի նախաձեռնությամբ տպագրվել են նաև Արցախի ազատագրական պայքարի մասնակիցների և քաղաքական, ռազմական ու այլ ոլորտների գործիչների հետ տարբեր տարիների հարցազրույցները կամ հուշերը [19], որոնք խնդրուարկա թեմայի վերաբերյալ հետաքրքիր մանրամասներ են պարունակում: Նոյն հիմնակն անդրադարձել է նաև Խորհրդային Արդբջանում պետականորեն կազմակերպված էթնիկական զոտումների ու հայերի ցևասպանության քաղաքականության բացահայտ դրսորմանը Սումգայիթ քաղաքում [20]:

Սերգեյ Խաչատրյանի հնաբնակենսագրական գիրքը [21] նոյն տարում վերահատարակվել է, որտև ներկայացվել են պատասխանատու պաշտոններ վարած Արցախի նվիրյալ զավակի 80-ամյա կյանքի ուղին, Ղարաբաղյան շարժման վերաբերյալ նրա հուշերը, «Կոռոնկ» կոմիտեի պատասխանատու քարտուղարի պաշտոնում աշխատե-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՒՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

լու ընթացքում ծևավորված որոշ փաստաթղթեր: Մեր աշխատանքի համար հատկապես ուշագրավ են «Կռունկ» կոմիտեի երթեմնի քարտուղարի հավաստի տևեկությունները 1988-ի կարևոր իրադարձությունների մասին:

Արժեքավոր տևեկություններ է պարունակում Արցախյան շարժման ակտիվիստներից, բանաստեծ Հրացա Բեգլարյանի «Արցախապատում» մատենաշարի երրորդ հասորը [22]: Այն ամբողջովին նվիրված է Արցախյան շարժմանը: Այն հիմնականում պարունակում է հեկնակի արխիվում պահպանված նյութերի մի մասը, քանի որ դարադարյան շարժման համար նախատեսված երկու գործերը սևմերով, նա դարձել է մեզը:

Փաստական հարուստ նյութ են պարունակում ժամանակագրական կամ տարեգրային բնույթի հրատարակությունները:

Հայոց նորագույն պատմության անխոնջ մշակներից Վահշիի Հարությունյանի հեկնակած «Իրադարձությունները Լեռնային Ղարաբաղում» ժամանակագրության (1988 թ. փետրվարից մինչև 1997 թ. մայիս) վեց հասորները [23] և Արցախյան շարժմանն ու նրա նախապատմությանը նվիրված մի շարք գործերը [24] դրական արձագանք են գտել ընթերցողների, այդ թվում՝ մասնագետների շրջանում և նշանակալի ավանդ են հայրենական պատմագրության մեջ:

Արցախյան շարժման տարեգրին տված մեր գնահատականը, կարծում ենք, չի կորցրել արդիականությունը. «Վ. Բ. Հարությունյանի սկզբնադրյուրային նշանակությունը ունեցող «Ղարաբաղի հայերի ազգային ազատագրական պայքարի նախապատմությունը» աշխատությունը, «Իրադարձությունները Լեռնային Ղարաբաղում» ստվարածավալ ժամանակագրությունը, «Հենրիկ Պողոսյան. Արցախի առաջնորդը 1988» գրքույկը դարձել են նորագույն պատմության մասնագետների փինտրած գործերը» [25]:

Մեծ հետարքորդություն են ներկայացնում Արցախյան շարժման գալակիարախոսներից, ակտիվիստներից ու տարեգրիներից Բագրատ Ովուբարյանի կարևոր ու ստվարածավալ գործերը, որոնցից ամենաստվարը տարեգրություն է [26]: Այդու նաև ևս զգուել է ի մի բերելու արցախյան գոյապայքարին վերաբերվող փաստերն ու տարբեր տևերից ժողոված նյութերը և դրանք ամփոփ տեսքով ներկայացնել մի ամբողջության մեջ:

Արցախյան շարժման ակտիվիստ Ռազմիկ Պետրոսյանի հուշագրական բնույթի գրքերում [27] հեկնակն ամենից առաջ հանդես է եկել իր տեսածն ու լսածը պատմելու, ծշմարտությունը ներկայացնելու անուրանակի շնորհը:

Հարժման լուսաբանմանը հակառակորդ կողմի մոտեցումների, իրադարձություններին տրված այլ մեկնարանությունների տեսակետից հետաքրքիր է տիխրահրչակ կազմկոմիտեի պատվերով հրատարակված ժամանակագրությունը [28] (թողարկման պատասխանատուներն էին Թ. Չուլֆիզարովը Ռ. Տոսուկը): Թեևս այն շատ է տուժել ակնարու միտումնավորությունից ու միակողմանիությունից, բայց կարող է օգտակար լինել Հարժման սկզբնական շրջանում տև գոտած իրադարձությունների համակողմանի ընկալման, մի շարք հարցեր ավելի օբյեկտիվ գնահատելու համար:

Արցախյան շարժման պատմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և այլ տեսանկյունները վերհանելու նպատակով կատարվել են տարաբնույթ ուսումնասիրություններ, որոնց արդյունքները հրատարակվել են առանձին գործերով ու ժողովածուներով:

Արցախյան շարժման նախապատմության ու սկզբնական փուլի վերաբերյալ արժեքավոր տվյալներ է պարունակում Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակած պատմական տեսականքը [29]:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Արցախի պատմության վիճակարույց հարցերը պատմականության մեթոդով և գիտական հիմքի վրա ներկայացնելու անհրաժեշտությունը հիմնավորել է պատմաբան և նորույն ներկայացնելով անցյալի իրադարձությունները [30]:

Սփյուռքում Արցախի հիմնախնդիրը հայ մտավորականների ուշադրության կենտրոնում էր: Դրա վկայություններից են նաև տարաբնույթ հրատարակությունները, որոնք կոչված էին պարզաբանելու Արցախի ինքնորոշման իրավունքի պատմական, քաղաքական, իրավական և այլ տեսանկյունները: Այդորինակ հրատարակություն էր Լևոն Մկրտչյանի գիրքը [31]: Վեր արժեքավոր հրատարակությունը պահանջված էր Արցախի մասին անհրաժեշտ տևեկույթը արտասահմանում յիարժեքորեն ներկայացնելու առումով, քանի որ եռալեզու(հայերեն, անգլերեն ու ֆրանսերեն) է:

Ուշագրավ է ակադեմիկոս Գրիգոր Ավագյանի ուսումնասիրություններն ամփոփող գիրքը [32], որտև ներկայացրված են Աղրբեջանական և ՍՀՀ իշխանությունների կողմից Լեռնային Ղարաբաղի հայ բազարնակչության նկատմամբ գործադրված մրնածնությունները, և ՍՀՀ վերադաս իշխանության մարմինների աջակցությամբ և առանց միջոցների խորության առաջ կանգնելու ամբողջ աղրբեջանահայությանը մրնագործության ներարկելու և նրանց ունեցվածքը մրնագործելու քաղաքականությունը:

Վ. Խոջաբելյանի գրքում [33] բացահայտվում է Արցախյան շարժման ազատագրական բնույթը: Տրվում լՂՀ հայ բնակչության ինքնորոշման իրավունքի արդարացի խնդրի էռույթունը, Աղրբեջանական և ՍՀՀ հայաշատ վայրերում սպիտակ ջարդի և դրան ուղեկցող կարմիր ջարդի հետևանքով Աղրբեջանի հայարակիման ընթացքը 1918-1990 թվականներին: Գրքում մեծ տև է հատկացվում 1988-1990թթ. Աղրբեջանական և ՍՀՀ հայ բնակչության բռնագաղթի, ցևասպանության, Հայաստանում նրանց բնակեցման, ինչպես նաև Հայաստանից աղրբեջանցի բնակչության արտագաղթի իրավան պատճառների բացահայտման հարցերին: Վիճակագրական անաշար փաստերի հիման վրա մերկացվում են աղրբեջանցիների կողմից իրական ժողովրդագրական գործնարանները նենգակիխված ներկայացնելու բոլոր փորձերը:

Հայ բազարնակչության հանդեպ Աղրբեջանական և ՍՀՀ իշխանությունների իրականացրած պետական ահաբեկչության քաղաքականությունը ներկայացրել է Սերգեյ Չոբանյանը [34]:

Աղրբեջանահայության ցևասպանության, բռնի տևահանության և ահաբեկչության քաղաքականությունը Բաքվում հայ բնակչության ջարդերի օրինակով բացահայտել են Ի. Սովետովան և Ա. Հովհաննյանը [35]:

Աղրբեջանական և ՍՀՀ մյուս քաղաքաներում հայ բազարնակչության նկատմամբ իրականացված բռնությունների, ահաբեկչության բազմաթիվ փաստերը տև են գտնել այլ հիմնակների աշխատանքներում [36]:

Աղրբեջանական և ՍՀՀ հայ ազգարնակչության էթնիկ գոտումների քաղաքականությունը փաստարկված ներկայացրել են նաև արտասահմանցի հիմնակները [37]:

Արցախյան շարժման իրավաբարձրագույն պատմաբան Խիկար Բարսևանը նպաստել է խորհրդային ու կուսակցական կենտրոնական մարմինների ԶՏՄ-ների միջոցներով ծավալած հակահայկական քարոզչության կմիջնական մասին մերկացնելուն և հասարակական օրյեկտիվ կարծիք ձևավորելուն: Պատմական փաստաթղթերով հավելված այդ հոդվածների հրատարակումն առանձին գրքով [38] և պահանջված էր ճշնարությունը հանրահրչակելու տեսակետից: Ուշագրավ են հիմնակի դիտարկումները լՂՀ-ի պատմությանը և հիմնախնդրի պատմագրությանը վերաբերվող հարցերի, 1988-1990թթ. տարածաշրջանում տևի ունեցած իրադարձությունների պատճառահետևանքային կապի, Արցա-

ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

խի հայ ազգաբնակչության ինքնորոշման իրավունքի իրացման ուղիների մասին: Պատմաբանը հիմնախնդիրը լուժելու միակ ուղին համարել է Լեռնային Ղարաբաղի վերամիավորումը Հայաստանին:

Պատմաբան Ուլիեն Ազգային վաստական հարուստ նյութի և իրապարակումների հիմնա վրա վերլուծել է հայ ժողովրդի 1985-1991թթ. պատմության կարևոր իրադրությունները, հատկանշել Արցախյան շարժման պատճառները [39]: Հիմնական իրավացիորեն կարևորել է Հայաստանում համերաշխության զանգվածային ելույթների մեջ ալիքի ծավալումը որպես՝ արցախցի հայրենակիցներին համբավետության աշխատավորումի լայն աջակցության արտահայտություն, միաժամանակ ցուց տվել իշխանությունների ակնհայտ կտրվածությունը ժողովրդական զանգվածներից, համաժողովրդական շարժումից Հայկական ԽՍՀ կուսակցական և պետական մարմինների ինքնամեկուսացումը:

Արցախում 1917-2000 թթ. տևի ունեցած դեպքերի մասին ժամանակակիցների վկայությունները և պահպանված վավերագրերը, պարբերական մամուլի նյութերը, ինչպես նաև տարբեր հիմնականների ուսումնասիրությունները վերարտադրել է պատմաբան Հրանտ Արքահամյանը [40]:

Ժամանակին տարբեր հիմնականներ, այդ թվում նաև մենք [41] անդրադարձել ենք Հ. Արքահամյանի աշխատությունների, հրապարակումների թերություններին ու մեթոդաբանական սխալներին:

Ուշ պաշտոնաթերթի խմբագիր-հիմնակի սիյուռքահայ ընթերցողին հասցեազրած, ըստ էության մեկ ամրողօւթյուն կազմող աշխատության [42] երեք պրականերում Ղարաբաղյան հարցը դիտարկվել է 1988թ. հուլիսի 18-ի որոշման լույսի տակ, ուստի և հետագա իրադարձությունների մասին պատմող նյութերը համախմբվել ու իրենց ուշագրավ մեկնաբանությունն են ստացել «Արցախյան հարցի սև թղթածրարը» խորագիր տակ:

Արցախյան շարժումը գիտականորեն վերահմաստավորելու անդրանիկ փորձերից մեկը կատարել է Բագրատ Ուլուբարյանը [43]: Ժամանակի մամուլում [44] հակասական զնահատականների արժանացած գիրքը եղակի է փաստական վիրխարի նյութի համակարգման ու խնդրո առարկա թեմայի վերաբերյալ տևեկությունների ընդհանուացման առումներով:

1918-1988 թթ. իրադարձություններն ականատեսի ու, հաճախ՝ մասնակցի քաջատկակությամբ Բ. Ուլուբարյանը ներկայացրել է ավելի վաղ տպագրած գրքերից մեկում [45]:

Աշխարհագրության Սերգեյ Սելքումյանի աշխատությունները [46] տալիս են Լեռնային Ղարաբաղի պատմաաշխարհագրական նկարագիրը, հպանցիկ ներկայացնում (հատկապես վերջինում) Արցախյան շարժման ընթացքը:

Պատմաբան Կիմ Ղարդամանյանը [47] տվել է Հյուսիսային Արցախի մասնակցությունը Արցախյան շարժմանը, ակներևաբար, մեծարժեք են հայոց, մասնավորապես՝ Հյուսիսային Արցախի և Արցախյան շարժման պատմության հիմնահարցերին նվիրված պատմաբանի կյանքի վերջին տարիներին գրած գրքերը [48]:

Կարևոր նյութեր են պարունակում ԼՂՀ ԳԽ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախկին նախագահ, քաղաքագետ-լրագրող Լևոն Մելիք-Շահնազարյանի ուշագրավ գրքերը [49]:

Ոզմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը հրատարակել է Կովկասյան տարածաշրջանի գծով փորձագետ Ալեքսանդր Գրիգորյանի աշխատանքը Արցախյան շարժման իրավաքաղական զարգացման չուսումնասիր-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

ված ուղղություններից մեկի մասին [50]: Այն հնարավորություն է քններում իմանալու Աղրբեջանի իշխանությունների քաղաքական մտածողության հիմնական դրսորումները, ինչը զգալիորեն կարող է նպաստել դարաբաղյան հիմնախնդրի լուծման ձևականացրին նրանց վարքագիծը ու դիրքորոշումը վերհանելուն: Ուշագրավ են նաև փորձագետի Արցախյան շարժման թեմատիկային նվիրված աշխատանքները [51]:

Արցախյան շարժման պատմական նախընթաց զարգացումներին ու հայ ազգարնակության ինքնորոշման իրավունքի հիմքերին անդրադարձել է բանասեր Արտաշես Հակոբանցանը[52]:

Ա. Արշակյանը փորձել է բազմակողմանի քննության առնել Արցախի ազատագրական պայքարի սկզբնավորման և, իր իսկ ձևակերպմամբ՝ «առաջին փուլի» իրադարձությունները և ընդհանրացրել փաստերն ու տեսակետները [53]:

Արժեքավոր ուսումնասիրություն է հրատարակել ազգագրագետ, պատմական գիտությունների դոկտոր Ա. Տեր-Սարգսյանը [54]: <Կինակն իր ծավալուն աշխատության 1-5-րդ գլուխներում գիտականորեն շարադրել է Արցախի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Հատկանշելի է, որ Արցախի բազմադարյան պատմությունը ռուսացեզու ընթերցողին մերժաբանորեն ճիշտ և հայագիտության վերջին տասնամյակների նվազումների հիմնա վրա ներկայացված է Հայաստանի պատմության հոլովույթում: Նման բարձրակարգ աշխատության լուս ընծայումը, կարծում ենք, պահանջված էր Աղրբեջանի գավթողական քաղաքականության և Անդրկովկասում եկվոր աղրբեջանցիների հրահրած արյունալի հակամարտության վերաբերյալ օրյեկտիվ հասարակական կարծիք կազմելու, միջնորդական ջանքերի քաղաքական և իրավապատմական ելակետերը ծցգրտելու, հայկական կողմի փաստարկների ծանրակշիռ հիմքերը հանրահրչակելու և այլ տեսանկյուններից:

Ակներևարար, Արցախյան շարժման վերաբերյալ պատմագիտական նշանակություն ունեցող գրականության ամբողջական տեսությունը հնարավոր չէ ներկայացնել մեկ հոդվածի շրջանակներում, ուստի նպատակահարմար է փաստագրություններին, տարատեսակ ժողովածուներին, ակնարկներին և այլ բնույթի հրատարակություններին անդրադարձնալ հետագայում:

Ներկայացված գրականության ուսումնասիրությունը ստողերիս հկինակին հանգեցրել է այն եզրակացությանը, որ Արցախյան շարժման պատմական, քաղաքական, իրավական, ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական և այլ տեսանկյունները թեև լուսաբանվել են հայ պատմագրության մեջ, սակայն նշված հարցերում միասնական հայեցակարգ ու մոտեցումներ չկան, ինչը հակամարտության կարգավորման համատեքստում չի կարող արդարացվել բազմակարծության, ճշմարտության որոնման պատճառաբանություններով: Մանավանդ, որ մեզանում գրեթե բացակայում է գիտական բանավեճերի և տեսակետների բախումների ու ողջամիտ համաձայնության գալու պրակտիկան:

Արցախյան շարժման պատմագրության հիմնահարցերին նվիրված հասուկ մենագրական աշխատանքի շրջանակներում նախատեսել ենք խմբավորել շրջանառվող տեսակետները, մերժադարանական մոտեցումները և ըստ հկինակների քննության առնել դրանք:

Այդ տեսակի աշխատության հրատարակումը, կարծում ենք, պահանջված է ինչպես գիտածանազողական ու տեսամեթոդական, այնպես էլ Արցախյան շարժման 30-ամյա հորեցյանը հատկանշելու նկատառումներով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Բարսեգյան Խ., Իстина дороже ... К проблеме Нагорного Карабаха-Арцаха, Еր., 1989,
Манасян А., Карабахский конфликт. Ракурсы правового подхода, Ер., 1998, Авагян
Г., Нагорный Карабах. Ответ фальсификаторам, Ер., 1991, Ավագյան Ա.,
Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ,
Եր., 1998, Սարգսյան Լ., Արցախյան շարժման լուսաբանումը թուրք-ադրբեյչա-
նական լրատվամիջոցներում (1988-1994թթ.), «Հայոց պատմության հարցեր»
(ՀՀ ԳԱԱ հրատ.), Եր., 2002, էջ 212-219, Հարությունյան Մ., Հայաստան-Ար-
ցախ. պատմության և արդիականության գուգահերներում (հոդվածների ժողո-
վածու), գիրք Ա, Ստ., «Դիզակ պյուս», 2009 և այլն:
2. Հայերի կոտորածները Բարձրի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920
թթ., «Հ պատմության արխիվ», Եր., «Լուսաս» ՍՊԸ տպարան, 2003:
3. Հայերի կոտորածները Բարձրի և Ելիզավետպոլի նահանգներում. 1918-1920
թթ., փաստաթղթերի ժողովածու, գիրք II / Պատաս. Խմբ.՝ Վիրաբյան Ա., կազմ.՝
Միհրզյան Ս., Եր., «Հ ԳԱԱ «Գիտություն» հրատ.», 2012:
4. Правда о Нагорном Карабахе, Составили: В. Товмасян, Ю. Нерсисян, ред.: В.
Агаджанян, С., «Арцах», 1989, Карабахский вопрос: история и сущность в
документах и фактах, Второе переработанное издание, Ред. кол.: Товмасян В.,
Агаджанян В., Нерсисян Ю., С., 1989, Азербайджанская аргументация и ее
опровержение, Ер., 1989, [Ենթային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ազգաբնակ-
չության լիազոր ներկայացուցիչների համագումարի նյութերը, Ստեփանա-
կերտ, օգոստոս 1989,ռուս. և հայերեն, Սեղադրվում են, Եր., 1989, Нагорный
Карабах. Весна-осень 1990. Документы и материалы, Ер., Б.и., 1990,
Շրջափակում. ժամանակագրություն (1989թ. սեպտեմբերի 14-ից նոյեմբերի 5-
ը): Պրակ 1-ին (14.09-10.10. 1989 թ.): Խմբ. հանձն.՝ Լիլյյան Հ. Ց.(հանձն.
նախագահ), Ղազարյան Ռ. Ա., Ղաֆլանյան Ա. Ա. և ուրիշն., Ե., “Լույս”, 1990,
Нагорный Карабах и вокруг него... Глазами независимых наблюдателей
(Сборник материалов). Составили: С. Золян, Г. Мироян, Ер., “Луйс”, 1991,
Թովմանյան Վ., Աթազանյան Վ., Նեսիլյան Յոլ., Ղարաբաղյան հարց, ռուս.
տերթստերի թարգմ.՝ Վ. Կանյան և ուրիշն., Ստ., Մաշտոցե, 1991 և այլն:
5. Нагорный Карабах в 1918-1923гг., Сборник документов и материалов, Ար., 1992,
Депортация населения армянских сел НКАО и прилегающих районов: апрель-июнь
1991 года, состав. и ред. Седа Вермишева[Библиотека Центра русско-армянских
инициатив], Е., 1995, Легитимность Нагорно-Карабахской Республики в материалах
и документах, ред. Седа Вермишева[Библиотека Центра русско-армянских
инициатив], Ер., 1995, Օհանջանյան Ս., Անկախության քայլերը: ԼՂՀ-ում անց-
կացված հանրաքվեն և ընտրությունները՝ 1991-1998թ., Ստեփանակերտ, Սո-
նաե, 1998, Պատմական նստաշրջան. ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորնե-
րի 22կարդա` 20թ-րդ գումարնան խորհրդի արտահերթ նստաշրջանի 1988 թ.
փետրվարի 20-ի նիստի արձանագրությունը՝ միաստաթղթերի և նյութերի ժողո-
վածու, կազմ.՝ Վ. Բալայան, Տ. Հակոբյան, Ստ., ԱրՊՀ, 2008Հայության պայ-
քարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար միաստաթղ-
թեր և նյութերը, կազմ.՝ պ. գ. թ., դոցենտ Կ. Խաչատրյան, պ. գ. դ. Հ. Աբրահամ-
յան, Եր., Պատմության ինստիտուտ, 2011 և այլն:

ՄԵՐՐՈԴ ՄԱՀԾՆԵՑ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ՂՈՎԱՐ 2018

6. Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий/ Сост., отв. ред., авт. вступ. ст. и comment. д.ю.н., проф. Ю. Г. Барсегов. В 2 т. Т. 1, М., Кругъ, 2008, Т. 2, М., 2009:
7. Հարությունյան Ս., Լեռնային Ղարաբաղը՝ միջազգային իրավունքում և համաշխարհային քաղաքականությունում (կազմ., պատասխանատու խմբագիր, ներած., հոդվ. և ժաման. հիմնակ ի.գ.դ., պրոֆ. Յոլ. Բարսեղյան): Մովկա հատ. 1-ին, 944 էջ (ռուսերեն): Գրախոսություն: Մերուց Մաշտոց Համալսարանի «Լրատու» (գիտական հոդվածների ժողովածու), 2009, հմ. 1 (5), էջ 154-156:
8. Барсегов Ю., Право на самоопределение – основа демократического решения межнациональных проблем. К проблеме Нагорного Карабаха, Ер., «Айастан», 1989, Բարսեղյան Յոլ., Խնքնորոշման իրավունքը ազգամիջյան պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է: Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի շուրջը [Ուսու. թարգմ. Ս. Խոցանյանը; Խմբ. Կոլեգիա՝ Գ. Գալոյան և ուրիշ.], Եր., «Հայաստան», 1990:
9. Правда о Нагорном Карабахе. Документальный сборник. Составили В. А. Товмасян, Ю. Б. Нерсисян. Ред. В. А. Агаджанян. Ст., 1989: Նույնի Երկրորդ լուսակած տարբերակը տես Կաрабахский вопрос. Истоки сущности в документах и фактах. Ст., «Аրцах», 1989:
- 10.Տես Թովմասյան Վ. Հ., Արցանյան Վ. Ա., Ներսիսյան Յ. Բ., Ղարաբաղյան հարց: Ակունքներն ու էությունը ըստ փաստաթղթերի և փաստերի, Ստ., 1991 (նույնը նաև ռուսերեն):
- 11.Մկրտչյան Շ., Արցանյան Վ. Ա., Ներսիսյան Յ. Բ., Ղարաբաղյան հարց: Ակունքներն ու էությունը ըստ փաստաթղթերի և փաստերի, Ստ., 1991:
12. Պրածի օ Նագորնո Կարաբախ. Մատերիալ և դումենտ, Ер., 1989:
13. Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (փաստաթղթեր և նյութեր), կազմ.՝ պ. գ. թ., դոցենտ Կ. Խաչատրյան, պ. գ. դ. Հ. Աբրահամյան, Եր., Պատմության ինստիտուտ, 2011:
14. Տես Հայության կոչերն ու դիմունները ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (1988-1989 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմ.՝ պ. գ. դ., պրոֆ. Հ. Աբրահամյան, պ. գ. թ., դոցենտ Կ. Խաչատրյան, Եր., Պի., 2014:
- 15.Մկրտչյան Ա., Ի՞նչ է տես ունեցել Հաղորդություն, Եր., 1992:
16. Նաջարյան Ք., Կանչ հայրենի տնից. Հայաստան և Ղարաբաղ օրագիրս, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000:
17. Բակուր [Կարապետյան], ...Եվ նրա շուրջ, գիրք առաջին. Կողիացած Երկիր, Եր., «Արկիկ», 1990:
18. Բակուր, Անգլուիու արցախեան ոդիսականը(Վիպակ), Եր., Եղիա Բաբումեան գրական իրատարակչական ֆոնդ, 1994:
19. Բակուր, Արցախյան գոյամարտի համահավաք: Մատենաշար, հատ. 1, Եր., «Շուշի ԲՀ», 2008, հատ. 2, Եր., «Շուշի ԲՀ», 2008, հատ. 3, Եր., «Շուշի ԲՀ», 2009, հատ. 4, 5, Եր., «Շուշի ԲՀ», 2011:
20. Բակուր, Սումգայիթյան օրագիր: 1988 թ. մարտի 27-ից ապրիլի 5, Եր., «Շուշի» հիմնադրամ, Հանրային կապերի և տևեկատվության կենտրոն, 2013:
21. Խաչատրյան Ս., Վաստակած պատիվ (ինքնակենսագրական նոթեր), Ստ., «Հորիզոն» ՍՊԸ, 2002:
22. Բեգլարյան Հ., Արցախ-Նամե, հ. 3, Ղարաբաղյան շարժում, Ստ., 2006:

23. Арутюнян В., События в Нагорном Карабахе. Хроника. Часть I. Февраль 1988г.- январь 1989г. Еր., Изд. НАН Арм ССР, 1990, Часть II. Январь-декабрь 1989г. Ер., Изд. "Гитутюн" НАН РА, 1993, Часть III. Январь-декабрь 1990г. Ер., Изд. "Гитутюн" НАН РА, 1993, Часть IV. Январь 1991г. - январь 1993г. Ер., Изд. "Гитутюн" НАН РА, 1994, Часть V. Январь 1993г. - июль 1995г. Ер., Изд. "Гитутюн" НАН РА, 1997, Часть VI. Июль 1995г. - май 1997г. Ер., Изд. "Наири", 1997:
24. Հարությունյան Վ., Արցախյան հիմնահարցի ակունքները, Ստ., «Սոնա», 1998, նոյնի՝ Предыстория национально-освободительного движения карабахских армян (из серии «События в Нагорном Карабахе»), Э., 2000, с. 80., նոյնի՝ Генрих Погосян: лидер Арцаха 1988, Э., 2000:
25. Հարությունյան Մ., Արցախահայության ազգային ազատագրական պայքարի արտացոլումը Վ. Բ. Հարությունյանի երկերում (Արցախյան շարժման 15-րդ տարեդարձը). - Մարտիկ, հմ. 6(508), 31 հունվար-6 փետրվար 2003, էջ 6:
26. Ուղուբարյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրությունը, Եր., 1997:
27. Պետրոսյան Ռ., Արցախի պաշտպանության դիրքերում, Եր., «Ամարաս», 1997, նոյնի՝ Արցախ, պատերազմ, զինադադար, Եր., «Ամարաս», 2001:
28. Хроника. НКАО: Февраль 1988 - Февраль 1990. Б., 1990:
29. Нагорный Карабах. Историческая справка, Ер., Изд. НАН Арм. ССР, 1988:
30. Хуршудян Л., Истина – единственный критерий исторической науки: Причины и цели нового этапа антиармянской кампании, развернувшейся в Азербайджане в связи с проблемой Нагорного Карабаха, Ер., Из-во ЕУ, 1989
31. Մկրտչեան Լ., Արցախ-Ղարաբաղը՝ իր անցեալով և ներկայով, Ա., 1988:
32. Авагян Г., Нагорный Карабах. Ответ фальсификаторам, Ер., 1991.
33. Խոջերելյան Վ., Արցախը փորձության ժամին, Եր., «Հայաստան», 1991:
34. Чобанян С., Государственно-организованный терроризм, SOS!, Геноцид армян 1988-1992гг., Ер., 1992.
35. Սոսեսով Ի., Հովհաննյան Ա., Բարզի ջարդերը, Եր., 1992, Мосесова И., Армяне Баку: бытие и исход. Документы. Свидетельства очевидцев. Газетные и журнальные публикации. Факты и комментарии к ним, Ер., «Айастан», 1998:
36. Сумгаит... Геноцид... Гласность? Сборник, Составили: Г. Б. Улубабян, С. Т. Золян, А. А. Аршакян, Ер., Общество Знаний АрмССР, 1989, Мелик-Шахназарян Л., Гандзак, Неутраченный мир (воспоминание очевидца), С., 1996, Заключение комитета Верховного Совета РСФСР по правам человека по итогам слушаний, посвященных конфликтов в ряде районов Азербайджанской Республики и Республики Армения (конец апреля-май 1991), Ер., 1992, Фонд общественно-политической информации. Геноцид армян в Азербайджане и Нагорном Карабахе. Ред. В. Агаджанян, Ст., Изд. центр Степанакертского полиграф предприятия, 1998, Фонд общественно-политической информации. Ненаказанный геноцид. К десятилетию армянского погрома в Сумгаите, Ред. В. Агаджанян, Ст., Изд. центр Степанакертского полиграфпредприятия, 1998, Фонд общественно-политической информации. Геворкян П., Дневник судебного процесса по уголовному делу о преступлениях, совершенных против армянского населения в гор. Сумгаите с 27 по 29 февраля 1988г. Ст., Изд. центр Степанакертского полиграфпредприятия, 1998, Арабян И., Геноцид и его наказуемость, Ер., 1999, Mkrtchyan Ш., Нагорный Карабах: анатомия совершенного Азербайджаном геноцида (1920-1988 թ.), Перевод с армянского Наиры Айрумян, Ст., Азат Арцах, 2003 և այլն:

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՍԱՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՐԱՍՒՆ 2018

37. Кокс К., Айбнер Дж., Этническая чистка продолжается. Война в Нагорном Карабахе, Ер., 1998:

38. Барсегян Х., Истина дороже... К проблеме Нагорного Карабаха-Арцаха, Ер., 1992.

39. Ազգիգելյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն: Համառոտ ակնարկ, Եր., 1992:

40. Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտ, Ե., «Գիտելիք», 1991, Նոյնի Մարտնչող Արցախը. գիրք Ա (1917-1923), Եր., «Զանգակ-97», 2003, գիրք Բ (1923-1985), Եր., «Զանգակ-97», 2003, գիրք Գ (1985-2000), Ստ., «Դիզայնություն», 2007:

41. Տես Սարգսյան Ս., Հարությունյան Մ., Հովհաննիսյան Լ., Այդպես չեն գրում պատմությունը, «Ազատ Արցախ», հմ. 65, 6 մայիսի 2008 թ., Հարությունյան Մ., Շուշիի ազատագրման պատմագրության հիմնահարցերը, «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Լրատու» (Գիտական հոդվածների ժողովածու), N 2, Ստ., 2007, էջ 46-52 (նոյնը լրագրային տարբերակով տես «Մարտիկ» (ԼՂ ՊԲ պաշտոնաթերթ), հմ. 18, մայիս 2008 թ.), նոյնի Վերստին Շուշիի ազատագրման պատմագրության հիմնահարցերի մասին, «Կաճառ» գիտական կենտրոնի տարեգիրք, հմ. 1 (10-22), 2007, Ը., «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2008, էջ 144-150, նոյնի (համահեկինակներով) նոյնի Եր., կմծիքն է պատմամանի գենքը, «Ազատ Արցախ», հմ. 110, 26 օգոստոսի 2008 թ.), նոյնի Նորագույն շրջանի ազատագրական պայքարի պատմության խևարյուրումների և հարակից այլ հարցերի մասին, «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 3(35-46), 2009, Ը., «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2014, էջ 207-242:

42. Նաճարեան Ե., Արցախեան հարցի սկ թղթածրարը: Պրակ Ա, Բ և Գ: Պ., 1989:

43. Ուլութաբյան Բ., Արցախի պատմությունը. սկզբից մինչև մեր օրերը, Եր., 1994, էջ 277-352

44. Կազգեն Մնացականյանը, այն համարելով հազվագյուտ երևոյթ՝ գործ է. «Այս գիրքը հասցեագրված է ամենքին և այս քաղաքացուն, որ ծնվելու է Վաղը: Ուրեմն այն մեզ համար արդեն գործող իրականություն է, իսկ նրա համար՝ ուշեւ ժառանգություն: Դժվար, սաստիկ դժվար է ստեղծել այնպիսի մի գիրք, որ իրավունք ունենա ապրել ներկայում, գալիքում և մշտապես երիտասարդ մնա իր անկուտրում Ճշնարսության մեջ: Կան գրքեր, որոնք «աչքի մի հարվածով» ընթերցել չեն կարող. «Տարեգրությունը» հենց այդպիսինն է» (Մնացականյան Կ., Խոհեմի Բագրատ Ուլութաբյանի «Արցախյան գոյապայքարի տարեգրության» առթիվ.- «Կաճ», 29 հուլիսի, 1998թ.), Աթանեսյան Վ., Պատմության քաղաքականացված պատմություն.- «Մարտիկ», թիվ 23, 1996 թ.:

45. Ուլութաբյան Բ., Արցախյան գոյապայքարը, Եր., «Գիր գրոց», 1993:

46. Մելքոնյան Ս., Լեռնային Ղարաբաղ, Եր., «Լույս», 1990, նոյնի Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Պատմատնտեսաշխարհագրական ուսումնասիրություն, Երևան, <<ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1997:

47. Ղարաբաղանյան Կ., Հյուսիսային Արցախ. Գոյության պայքար(2 գրուվ). Գիրք Ա, Բ, Ե., «Միքայլ Վարանդեան», 1993, նոյնի Սևերի Արցախ: Կանչեամեան կրան, Եր., «Մ. Վարանդյան», 1994, նոյնի Օջախի գիրք. Հողը կանչում է, Գիրք Բ, Երևան, «ԴԱԱ», 2005, նոյնի Օջախի գիրք: Կարուտի հասցեներ, Գիրք Գ, Եր., «Զանգակ-97», 2011:

48. Ղահրամանյան Կ., Հայ էթնոսի պատմական առաքելությունը, խմբ.՝ Հենգել Մանուչարյան, Եր., «ՂԱԸ», 2012, նոյնի Վրցախ. խևաթուրված և անտեսված հարցեր, խմբ.՝ Ավարդ Ղազիյան, Եր., «ՂԱԸ», 2013:

49. Մելիկ-Շահնազարյան Լ., Վоенные преступления Азербайджана против мирного населения Нагорно-Карабахской республики. Факты и комментарии, Ер., «Наири», 1997, (второе издание), Ер., «Айрапет», 2016, Մելիք-Շահնազարյան Լ., Արդրեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ: Խմբ.՝ Լ. Բարսելյան; <<ԳԱԱ, Հայոց ցևասպանութ. թանգ.-ին-տ., Եր., <<ԳԱԱ «Գիտություն» իրաւ.՝ 1998: Մելիկ-Շահնազարյան Լ., Խաչատրյան Ա., Էթнополитика Азербайджана, Ер., «Де-Факто», 2007, Մելիկ-Շահնազարյան Լ., Օ войне и победе. Том I, Том II, Составитель и редактор Елена Хачатрян, Ер., «Айагитак», 2015:

50. Գրիգորյան Ա., Լогика политического мышления властных структур Азербайджана в контексте правового развития Карабахского вопроса, Ер., 1997:

51. Գրիգորյան Ա., Աзерբայջан и Нагорный Карабах: Диалектика возникновения и развития двух систем гособразований, Ер., Изд-во АЦСиНИ, 1997, նոյնի Արմяно-азербайджанские отношения: Реалии и перспективы / Арм. центр стратег. и нац. исследований, Еջ., Изд-во АЦСиНИ, 2001, նոյնի Վласть и оппозиция в Азербайджане: традиции, взаимоотношения, перспективы, Еջ., Изд-во АЦСиНИ, 1999:

52. Հակոբշանյան Ա., Վրցախյան ազատամարտի ակունքների մոտ հոդվածներ, Եր., 2001, նոյնի Աններեկի անգիտության ու քարոզական պատերազմի հայրենական ձահճուտներում, խմբ.՝ Ա. Ա. Հակոբշանյան, Եր., 2013 նոյնի Ղարաբաղյան հիմնահարցը դարավագոր մաքառումների արդյունքում, Եր., Զանգակ-97Ե, 2004, նոյնի Հիշենք, Վերլուծենք, դասեր քաղենք մեր պատմության արյունոտ էջերից, Եր., հրատ. նշանակած չէ, 2009:

53. Արշակյան Ա., Վրցախյան գոյապայմանը (1985-1992), Եր., «Ղինգվա», 2004:

54. Տեր-Սարկисյան Ա., Արման Հայոց պատմության պատմության կամաց պատմության մասնաւոր գործությունները, Եր., Հայաստանի պատմության պատմության արյունոտ էջերից, Եր., հրատ. նշանակած չէ, 2015:

ԱՐՓՈՓԱԿԻՐ

Արցախյան շարժման պատմագիտական ինստիտուտի համապատասխան շուրջ Միեր Հարությունյան

Արցախյան շարժումը դարձակազմիկ ու շրջադարձային մեծ իրադարձություն էր համայն հայության համար, հետևաբար այն պետք է լինի Հայաստանի նորագույն պատմության առաջնահերթ ուսումնասիրության առարկան:

Ներկայացված են անցած երեք տասնամյակի ընթացքում լույս տեսած այն հիմնական հրատարակությունները, որոնք, ըստ ժամանակագրական, աշխարհագրական ու գաղափարախոսական առանձնահատկությունների, որոշակի զարգացումներ են ապրել, աստիճանաբար ստևածել և տարածել փաստերի ու փաստարկների համակարգեր, դրանց կամայական մեջնաբանություններից ծնված առասպելներ ու քարոզական արտահայտություններ:

РЕЗЮМЕ

Об историко-восточном осмыслении Арцахского движения
Мгер Арутюнян

Ключевые слова: Арцахское движение, Армения, новейшая история, предмет изучения, основные публикации, пропагандистские выражения

Арцахское движение стало знаменательным и переломным событием для всех армян, следовательно, оно должно стать основным предметом исследования новейшей истории Армении.

Представлены основные публикации, напечатанные за прошедшие тридцать лет, которые, согласно хронологическим, географическим и идеологическим особенностям, претерпели определенное развитие, постепенно создавая и распространяя системы фактов и гипотез, и появившиеся из их произвольных толкований легенды и пропагандистские выражения.

SUMMARY

On the historical sense of Artsakh Movement
Mher Harutyunyan

Keywords: Artsakh movement, Armenia, newest history, research subject, main publications, propagandist expressions

Artsakh movement was a decisive and historical event for all Armenians; hence it should be the primary research subject for Armenian newest history.

Here we present the main publications printed during more than thirty years past, which, according to chronological, geographical and ideological peculiarities, have undergone certain progress, gradually creating and spreading systems of facts and hypothesis, legends and propagandist expressions concluded from their volunteer interpretations.